ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՉԱՓԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ք. Երևան **«15».01.2025թ.**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը *(այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար* **Աշոտ Ավագյանի**, *մի կողմից և «Արմ Թռասթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս ընկերության տնօրեն Արայիկ Ստեփանյանի, մյուս կողմից (երկու կողմերին միասին հիշատակելու դեպքում՝ այսուհետ Կողմեր), հիմք ընդունելով Կողմերի միջև 30.12.2024թ. կազմված արձանագրությունը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.*

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն Պայմանագրով Պատվիրատուն Կատարողին պարբերաբար հանձնարարում է ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի 1441-Ն որոշմամբ սահմանված կարգով պետական լիազոր մարմնից որակավորման վկայական ստացած անձանց / աշխատակիցների միջոցով իրականացնել անշարժ գույքի (այսուհետ՝ Օբյեկտ) չափագրում և դրա արդյունքների հիման վրա կազմված հաշվետվությունը թղթային, ինչպես նաև էլեկտրոնային տարբերակով, տրամադրել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին Պայմանագրով սահմանված ժամկետում վճարել մատուցված ծառայությունների դիմաց:

1.2. Պայմանագրով պատվիրված բոլոր չափագրումները կատարվում են Պատվիրատուի և Կատարողի միջև նախորոք համաձայնեցված Հավելված 1-ով հաստատված գնացուցակի համաձայն, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Կատարողից պահանջել ծառայությունը մատուցել Օբյեկտի չափագրման և ծառայության իրականացման համար պահանջը և անհրաժեշտ նյութերը ստանալուն հաջորդող օրվանից տասն օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

2.1.2. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից իրականացվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

2.2. Կատարողի կողմից Պայմանագրի կատարումը ժամանակին չսկսելու, կամ աշխատանքը այնքան դանդաղ կատարելու դեպքում, ինչպիսի պայմաններում դրա՝ ժամանակին ավարտելը դառնում է ակնհայտ անհնար, հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու վնասները:

2.2. **Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1. Կատարողին տրամադրել Օբյեկտի չափագրման համար անհրաժեշտ փաստաթղթեր և հավաստի տեղեկություններ:

2.2.2. Վճարել ծառայությունների մատուցման արժեքը՝ համաձայն ներկայացված հաշիվ-ապրանքագրի:

2.2.3. Ապահովել Կատարողի մուտքը Օբյեկտ:

2.2.4. Կատարողի կողմից Պայմանագրի 3.2 կետով սահմանված միջնորդություն ներկայացվելու դեպքում քննարկել Օբյեկտի չափագրման ժամկետի երկարաձգման հնարավորությունը:

2.3. **Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1. Օբյեկտի չափագրման ընթացքում Պատվիրատուից պահանջելու չափագրման համար անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ՝ բացառությամբ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական, ծառայողական և առևտրային գաղտնիք համարվող տեղեկության:

2.3.2. Օրենքով սահմանված կարգով ձեռք բերելու չափագրման համար ելակետային փվյալներ և այլ տեղեկություններ, այդ թվում՝ հարցում կատարելու՝ երրորդ անձանցից տեղեկատվություն ստանալու համար:

2.3.3. Պատճառաբանված միջնորդություն ներկայացնել Պատվիրատուին՝ Օբյեկտի չափագրման ժամկետը մինչև մեկ ամսով երկարաձգելու վերաբերյալ:

2.4. **Կատարողը պարտավոր է՝**

2.4.1. Ապահովել Պայմանագրով սահմանված պարտավորությունների պատշաճ կատարումը:

2.4.2. Ապահովել սույն պայմանագրի կնքման և կատարման առնչությամբ իրեն հայտնի դարձած ոչ հրապարակային տեղեկությունների գաղտնիությունը:

2.4.3. Օբյեկտի չափագրումն իրականացնել անձամբ և միայն Պատվիրատուի հանձնարարությամբ ու օրենքով սահմանված կարգով, Պայմանագրի Հավելված 1-ով հաստատված սակագներով, որոնք կարող են փոփոխվել միայն Կողմերի լրացուցիչ գրավոր համաձայնագրով:

2.4.4. Չափագրման նպատակով ապահովել Օբյեկտի զննումն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագետի մասնակցությունը՝ ոչ ուշ, քան համապատասխան Օբյեկտի չափագրման համար նշանակված փորձաքննության որոշումն ստանալուց հետո 7-օրյա ժամկետում:

2.4.5. Օբյեկտի չափագրումն իրականացնել և չափագրման հաշվետվությունը տրամադրել (այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով) Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով:

2.4.6. Պատվիրատուին ժամանակին տրամադրել լիարժեք, ամբողջական, հավաստի և մատչելի տեղեկատվություն Ծառայությունների ընթացքի ու արդյունքների վերաբերյալ:

2.4.7. Ծառայությունները մատուցելիս կիրառել միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան չափագրման մեթոդներ:

2.4.8. Անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքում առաջացած խնդիրների և/կամ խոչընդոտների մասին:

2.4.9. Անշարժ գույքի գնահատման բոլոր հաշվետվություններում ներառել Օբյեկտի տեղորոշումը (գեոլոկացիա):

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1. Կատարողի կողմից Օբյեկտի չափագրումն իրականացվում և հաշվետվությունը Պատվիրատուին տրամադրվում է Օբյեկտի չափագրման և ծառայության մատուցման համար անհրաժեշտ նյութերի տրամադրման հաջորդ օրվանից սկսած՝ տասն օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ քան հարկադիր կատարողի՝ փորձագետ նշանակելու մասին որոշումն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

3.2 Օբյեկտի չափագրման և ծառայության մատուցման համար Պատվիրատուի կողմից ներկայացված նյութերը Կատարողի գնահատմամբ բավարար չլինելու պայմաններում, Կատարողը դրանք ստանալուն հաջորդող օրը բացակայող նյութերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ տեղեկացնում է Պատվիրատուին՝ սահմանելով դրանց ցանկը և/կամ անվանումները կամ նույն ժամկետում ձեռնարկում է անհրաժեշտ նյութերը երրորդ անձանցից ձեռք բերելուն ուղղված միջոցներ:

3.3. Պայմանագրի 3.1. կետում նշված ժամկետում Օբյեկտի կատարումն անհնարին դարձնող հանգամանքների առկայության դեպքում Կատարողն իրավունք ունի Պատվիրատուին պատճառաբանված միջնորդություն ներկայացնել՝ 3.1 կետում նշված ժամկետը ոչ ավելի, քան մեկ ամսով երկարաձգելու մասին: Սույն կետով նշված միջնորդությունը պետք է ներկայացվի ոչ ուշ, քան Պայմանագրի 3.1 կետով սահմանված ժամկետը լրանալուց 10 օր առաջ:

3.4. Պայմանագրի 3.1. կետում նշված ժամկետն առանց հարգելի պատճառների խախտելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի առանց Կատարողին նախապես ծանուցելու միակողմանիորեն լուծել Պայմանագիրը և պահանջել Կատարողից հատուցել վնասները:

3.5. Եթե Կատարողը ժամանակին չի սկսում Պայմանագրի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա՝ ժամանակին ավարտելը դառնում է ակնհայտ անհնար, Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու վնասները:

3.6. Օբյեկտի չափագրումն ավարտելուն պես Կատարողը պարտավոր է չափագրման ավարտի մասին անհապաղ հայտնել Պատվիրատուին:

3.7. Չափագրման համար անհրաժեշտ փաստաթղթեր կամ տեղեկություններ տրամադրելու Կատարողի գրավոր պահանջի օրվանից մինչև Պատվիրատուի կամ երրորդ անձի կողմից դրանք տրամադրելու օրն ընկած ժամանակահատվածը գնահատման կատարման ժամկետի մեջ չի հաշվարկվում:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կողմից մատուցման ենթակա ծառայությունների համար սակագները սահմանված են Հավելված 1-ով:

4.2. Հավելված 1-ով սահմանված սակագները ներառում են Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.3. Պայմանագրի հիման վրա յուրաքանչյուր չափագրված Օբյեկտի չափագրման արժեքն ամրագրվում է Կատարողի կողմից դուրս գրվող հաշիվ-ապրանքագրով, որը Պատվիրատուին է հանձնվում (ուղարկվում) չափագրման հաշվետվության հետ միասին:

4.4. Յուրաքանչյուր ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների համար Պատվիրատուն Կատարողին վճարում է մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը:

4.5. Պատվիրատուն իրեն մատուցված ծառայության դիմաց վճարում է անկանխիկ եղանակով՝ դրամական միջոցները Կատարողի կողմից դուրս գրված հաշիվ-ապրանքագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է Պայմանագրի Հավելված 2-ով սահմանված հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

5. ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Պատվիրատուն հանձնարարությունը կից գրությամբ և համապատասխան որոշմամբ ուղարկում է Կատարողին՝ հնարավորության դեպքում նաև էլեկտրոնային եղանակով:

5.2. Կատարողը չափագրման հաշվետվությունը Պատվիրատուին է ուղարկում համապատասխան կից գրությամբ:

5.3. Կատարողը պարտավոր է չափագման հաշվետվությունը Պատվիրատուին ուղարկել նաև էլեկտրոնային եղանակով:

6. ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ԴԱԴԱՐԵԼԸ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մեկ տարի ժամկետով:

6.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ այդ մասին մյուս կողմին առնվազն երեսուն օր առաջ տեղյակ պահելով:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և/կամ արտակարգ դրություն հայտարարելը, պետական մարմինների ընդունած ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

7.2. Կողմը, որի՝ Պայմանագրով սահմանված պարտավորության կատարումն անհնարին է դարձել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, պարտավոր է այդ մասին անհապաղ, բայց ոչ ուշ, քան այդպիսի հանգամանքները ծագելուց հետո 3-օրյա ժամկետում գրավոր կերպով հայտնել մյուս կողմին:

7.3. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես՝ առնվազն մեկ ամիս առաջ, տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները վավեր են, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կամ վերջիններիս ներկայացուցիչների կողմից:

8.2. Պայմանագրով չնախատեսված դեպքերում իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.3. Պայմանագիրը կազմված է հայերենով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.4. Պայմանագրի պայմանների կատարման ընթացքում Կողմերի միջև ծագած վեճերն առաջնահերթության կարգով լուծվում են բանակցությունների միջոցով՝ նախապահանջային եղանակով: Պայմանագրի խախտում վկայակոչող կողմն այդ մասին գրավոր նախապահանջ է ներկայացնում Պայմանագրի մյուս կողմին: Նախապահանջը ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում Պայմանագիրը ենթադրաբար խախտած կողմից պատասխան չստացվելու կամ նախապահանջը մերժվելու դեպքում վեճը կարող է լուծվել դատական կարգով:

8.5. Պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

8.6. Պայմանագրի կետերից մեկն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելը չի հանգեցնում Պայմանագրի մյուս կետերն ուժը կորցրած ճանաչելուն կամ դրանց անվավերությանը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն	**«Արմ Թռասթ» ՍՊԸ**
Հասցե՝ 0078, ք. Երևան, Հալաբյան 41ա	Գտնվելու վայրը՝
ՀՎՀՀ 01223338	ք. Երևան, Երվանդ Քոչարի 19/50
Կենտրոնական գանձապետարանի	ՀՎՀՀ 02852244
գործառնական վարչություն	Հ/Հ 2053122063241001
Հ/Հ 900011288025	«Ինեկոբանկ ՓԲԸ
Գլխավոր քարտուղար	**Տնօրեն**
_____ Ա. Ավագյան	_____ Ա. Ստեփանյան

ՀԱՎԵԼՎԱԾ № 1

«____» _____ 2025թ. կնքված
պայմանագրի

ՉԱՓԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ

N/N	Չափագրման ծառայություն	քանակ	Գինը /ՀՀ դրամ/ ներառյալ հարկերը
1	Բնակարանների չափագրում	Մինչև 2 սենյակ	40000 ՀՀ դրամ
		3 և ավել սենյակ	50000 ՀՀ դրամ
2	Բնակելի տների չափագրում	Մինչև 200քմ շինությամբ և մինչև 2000 քմ հողամասով բնակելի տուն	120000 ՀՀ դրամ
		200 քմ-ն գերազանցող շինության յուրաքանչյուր քմ համար	200 ՀՀ դրամ
3	Արտադրական շենքերի չափագրում	Մինչև 1000 ք.մ. շինությամբ և մինչև 1000քմ հողամասով բնակելի տուն	140000 ՀՀ դրամ
		1000 ք.մ-ն գերազանցող շինության յուրաքանչյուր քմ համար	100 ՀՀ դրամ
4	Հողամասերի չափագրում	Մինչև 1 հա	30000 ՀՀ դրամ
		1 հա և ավել	40000 ՀՀ դրամ

10. ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
Հասցե՝ 0078, ք. Երևան, Հալաբյան 41ա

ՀՎՀՀ 01223338

Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն
Հ/Հ 900011288025
Գլխավոր քարտուղար

_____ **Ա. Ավագյան**

ԿԱՏԱՐՈՂ

«Արմ Թռասթ» ՍՊԸ
Գտնվելու վայրը՝
ք. Երևան, Երվան Քոչարի 19/50
ՀՎՀՀ 02852244
Հ/Հ 2053122063241001
«Ինեկոբանկ ՓԲԸ

Տնօրեն

_____ **Ա. Ստեփանյան**

ՀԱՎԵԼՎԱԾ № 2

« » 2025թ. կնքված

պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» _____ 202 թ.

Պայմանագրի անվանումը՝ Անշարժ գույքի չափագրման ծառայությունների մատուցման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__» _____ 202 թ.

Պայմանագրի համարը №

Պատվիրատու, ի դեմս Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գլխավոր քարտուղար Ա. Ավագյանի և Կատարողը, ի դեմս ընկերության տնօրենի, հիմք ընդունելով, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություններ) համապատասխանում են Պայմանագրին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի Օշրջանակներում Կատարողը «__» _____ 202 թ-ից «__» _____ 202 0''''''''''''''''''''''''''''0'1''''''''''թ. ընկած ժամանակահատվածում մատուցել է հետևյալ ծառայությունները

Մատուցված Ծառայության անվանումը	Մատուցված ծառայության քանակական ցուցանիշը	Ծառայություններ ի մատուցման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Գույքի չափագրում				
Ընդամենը				

Վերոհիշյալ Ծառայությունների մատուցման վերաբերյալ կազմված բոլոր հաշիվ-ապրանքագրերը կցվում են սույն արձանագրությանը և դրա անբաժանելի մասն են:

Ծառայությունը հանձնեց

_____

ստորագրություն

_____

Ազգանուն, Անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____

ստորագրություն

_____

Ազգանուն, Անուն

Կ.Տ.

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ՆՓ-1441-2025 15/01/2025

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱԼԲԵՐՏ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Նազարյան,

Ձեզ է ուղարկվում «Արմ Թռասթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված «Անշարժ գույքի չափագրման ծառայությունների մատուցման» պայմանագրի նախագծի՝ Ծառայության իրավաբանական բաժնի կողմից փոփոխված տարբերակը, որը նաև նկատառումներ է պարունակում առանձին կետերի վերաբերյալ:

Հարգանքով՝

Բաժնի պետ

Գոհար Մկրտչյան

gitally signed by
KRTCHYAN
OHAR
)03890614
ate: 2025.01.15